- (բ) որևէ պատճառով կասեցնում է կամ կանոնավոր և շրջահայացորեն չի կատարում սույն Պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները կամ դրանց մի մասը և շարունակում է խախտումը այդ մասին Կողմերի գրավոր ծանուցումը ստանալուց հետո 30 (երեսուն) օրվա ընթացքում կամ ցանկացած ժամանակ կրկնում է այդ խախտումը, կամ
- (գ) սկսում է վերակազմակերպումից կամ միացումից տարբերվող նպատակով կանոնվին լուծարման գործընթաց, որը չի ներառում սնանկություն կամ դատարանի որևէ կարգադրություն՝ արված նրա հարկադիր լուծարման հետ, կամ ունի կառավարիչ, սնանկության կառավարիչ կամ նմանատիպ ծառայող՝ նշանակված նրա գույքի ցանկացած էական մասի նկատմամբ,
- (դ) սնանկացել է, անվճարունակ է դարձել կամ իր պարտատերերի հետ եկել է միացման կամ որևէ այլ համաձայնության կամ իրականացնում է կամ իր հանդես իրականացվում է որևէ նմանօրինակ

(f) the Defaulting Party or any person who Controls it shall have been convicted of any offence (other than a traffic offence) in Armenia or elsewhere involving fraud, misrepresentation or dishonesty; then and in any such event the Defaulting Party shall be deemed to have terminated this Agreement as against the other Parties but without prejudice to the rights of the other Parties against the Defaulting Party in relation to any antecedent breaches and claims which may have arisen and such other rights and remedies as any of them may have.

գործողություն որևէ ընդդատության շրջանակներում կամ դադարեցնում է կամ սպառնում դադարեցնել գործունեությունը կամ դրա նշանակալի մասը կամ ենթարկվել է աղետի կամ ոչնչացման կամ նրա հանդեպ կիրառված կամ պարտադրված այլ գործողության կամ հախտում Կատարող Կողմի գույքի նշանակալի մասի նկատմամբ ներկայացվել է դատական հայց, կամ

(ե) ողջ գույքը կամ դրա մի մասը անցել է Ծանրաբեռնվածություն տարածողի կամ հավատարմագրային կառավարչի կամ սնանկության կառավարչի տիրապետմանը, կամ

(զ) խախտում Կատարող Կողմը կամ նրա նկատմամբ Հսկողություն իրականացնող ցանկացած անձը Հայաստանում կամ այլուր մեղավոր է ճանաչվել խարդախության. սխալ տվյալների ներկայացման կամ անազնվության մեղադրանքով

(բացի ճանապարհատրանսպորտային իրավախախտումներից), ապա ցանկացած այդպիսի դեպքում հախտում Կատարող Կողմը կհամարվի սույն Պայմանագիրը մյուս Կողմերի հանդեպ դադարեցրած՝ չսահմանափակելով, սակայն, նախորդող խախտումների կամ պահանջների հետ կապված՝ հախտում Կատարող Կողմի հանդեպ մնացած Կողմերի իրավունքները և նրանցից յուրաքանչյուրի որևէ այլ իրավունք:

7.4 For the avoidance of doubt, Clauses 8, 12, 17 and 18 will survive the termination of this Agreement.

7.4 Դրույթներ 8-ը, 12-ը, 17-ը և 18-ը կպահպանեն իրենց գործողությունը սույն Պայմանագրի դադարումից հետո:

8. ANNOUNCEMENTS

8.1 None of the parties hereto shall divulge to any third party (except to their respective professional advisers, their respective shareholders or other regulatory body or except as required by applicable law and/or in connection with litigation as between the Parties and as required for its approval and reporting purposes) any information regarding the existence or subject matter of this Agreement (including, without limitation, the pricing formula of the Call Option), or any other agreement referred to in, or executed in connection with, this Agreement, without the prior agreement of the other Party in writing. No publicity

8. ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

8.1 Սույն Պայմանագրի կողմերից ոչ մեկը չի կարող առանց մյուս Կողմի նախնական գրավոր համաձայնության երրորդ անձանց հայտարարի (բացի մասնագիտական խորհրդատուներից, բաժնետերերից կամ այլ կանոնակարգող մարմնից կամ կիրառելի օրենքով պահանջվող կամ Կողմերի միջև դատավարության հետ կապված և դրա հաստատման ու հաշվետվության նպատակներով անհրաժեշտ դեպքերից) սույն Պայմանագրի գոյությանը կամ դրա առարկային վերաբերող (ներառելով, բայց չսահմանափակվելով Գնման Օպցիոնի

materials, press announcements or other releases that incorporates this Agreement or any references to the Vendor shall be made public without the prior written consent of the Vendor.

8.2 Notwithstanding Clause 8.1, the confidentiality obligation as set out in Clause 8.1 shall not apply to any information which is required to be disclosed by the Parties pursuant to any reporting, approval or audit requirements imposed on or by it.

8.3 The obligations contained in this Clause 8 shall survive for a period of [2 years] from any termination, expiration or rescission of this Agreement.

9. TRANSFER AND ASSIGNMENTS

9.1 In the event of a transfer, sale and/or disposal by the Vendor of the entirety of its Shares in the Fund (except in the case of a transfer of all of the Vendor's Shares to the Exercising Purchasers pursuant to the exercise of the Call Option under this Agreement), the purchaser or transferee of Vendor's Shares in the Fund shall sign the Vendor Transfer Deed of Novation and the Vendor shall be released from all its obligations under this Agreement.

9.2 In the event of a transfer, sale and/ or disposal by a Purchaser of all or part of its Shares in the Fund, the purchaser or transferee of Purchaser's Shares in the Fund shall sign the Purchaser Transfer Deed of Novation and the Deed of Accession and Ratification. In the event the Purchaser has transferred, sold or disposed all its Shares in the Fund, the Purchaser shall be released from all its rights and obligations under this Agreement.

9.3 This Agreement and the rights and/or

գնորոշման բանաձևով) կամ դրանում նշված կամ դրա վերաբերյալ կնքված որևէ այլ համաձայնագրի վերաբերող որևէ տեղեկատվություն: Սույն Պայմանագրին վերաբերող կամ Վաճառողին հղում կատարող ոչ մի գովազդային նյութ, մամուլի կամ այլ հայտարարություն չպետք է հրապարակվի առանց Վաճառողի նախնական գրավոր համաձայնության:

8.2 Անկախ Դրույթ 8.1-ից՝ դրանում նախատեսված գաղտնիության պահպանման պարտականությունը չի կիրառվի ցանկացած այնպիսի տեղեկատվության վրա, որի բացահայտումը Կողմերից պահանջվում է ցանկացած հաշվետվության, հաստատման կամ աուդիտի պահանջների կատարմանը համապատասխան:

8.3 Դրույթ 8-ում նշված պարտականությունները շարունակում են գործել սույն պայմանագրի դադարումից, ժամկետը լրանալուց կամ անվավերությունից հաշվարկված 2 տարվա ընթացքում:

9. ՓՈԽԱՆՑՈՒՄ ԵՎ ՉԻՋՈՒՄ

9.1 Ֆոնդի բոլոր Բաժնետոմսերի՝ Վաճառողի կողմից փոխանցման, վաճառքի և/կամ այլ կերպ տնօրինման դեպքում (բացի Գործող Գնորդներին Վաճառողի բոլոր Բաժնետոմսերը փոխանցելու դեպքից) Ֆոնդի՝ Վաճառողին պատկանող Բաժնետոմսերի գնորդը կամ Ստացողը պետք է ստորագրի Վաճառողի Փոխանցման Նորացման Ակտ, իսկ Վաճառողը կազատվի սույն Պայմանագրից բխող իր բոլոր պարտականություններից:

9.2 Ֆոնդի բոլոր Բաժնետոմսերի կամ դրանց մի մասի՝ Գնորդի կողմից փոխանցման, վաճառքի և/կամ տնօրինման դեպքում Ֆոնդի՝ Գնորդին պատկանող Բաժնետոմսերի գնորդը կամ ստացողը պետք է ստորագրի Գնորդի Փոխանցման Նորացման Ակտ և Միանալու և Վավերացման Համաձայնագիր: Գնորդի կողմից Ֆոնդի՝ իրեն պատկանող Բաժնետոմսերը վաճառելու, փոխանցելու և/կամ այլ կերպ տնօրինելու դեպքում նա կազատվի սույն Պայմանագրից բխող իր բոլոր պարտականություններից:

9.3 Սույն Պայմանագիրը և դրանից բխող

obligations under this Agreement may only be assigned or transferred by a Purchaser to another party ("Transferee") at the same time the Purchaser transferred all or part of its Shares in the Fund to the Transferee. Any other attempted or purported assignment, transfer or disposal shall be void.

10. COSTS

10.1 Each of the Parties hereto shall bear its own legal and other professional costs and expenses incurred by it in the negotiation and preparation of this Agreement save that the Purchasers (including the Manager) shall bear all costs and other charges required and/ or levied on the transfer of any Call Option Shares and Class C Preferred Shares pursuant to the exercise of the Call Options by the Purchasers and of the Class C Preferred Shares Call Option by the Manager (including payments to be made to the registrar).

11. COUNTERPARTS

11.1 This Agreement may be signed in any number of counterparts, all of which taken together and when delivered to the Parties shall constitute one and the same instrument. Any Party may enter into this Agreement by signing any such counterpart and delivering to the Manager a signed acceptance document substantially in the form of Schedule D.

12. NOTICES

Any notice to be given under this Agreement shall be in writing and deemed to have been given when it is delivered by hand, airmail or facsimile transmission to the party to which it is to be given at such party's address specified below its signature to this Agreement or at such other address as such party has notified to the other party.

13. REMEDIES

13.1 No remedy conferred by any of the provisions

իրավունքները և/կամ պարտականությունները Գնորդի կողմից կարող են փոխանցվել կամ զիջվել այլ անձանց (Ստացող) միայն Ֆոնդի՝ Գնորդին պատկանող բոլոր Բաժնետոմսերի կամ դրանց մի մասի՝ Ստացողին փոխանցելուց հետո: Ցանկացած այլ զիջում, փոխանցում կամ տնօրինում կամ դրա փորձ անվավեր է:

10. ԾԱԽՍԵՐ

10.1 Սույն Պայմանագրի Կողմերից յուրաքանչյուրը կրում է իր սեփական իրավաբանական և մասնագիտական ծախսեր, որոնք առաջացել են սույն Պայմանագրի բանակցությունների և պատրաստման հետ կապված: Որպես նշվածից բացառություն՝ Գնորդները (այդ թվում Կառավարչի) կրում են նրանց կողմից Գնման Օպցիոնի և C Դասի Արտոնյալ Բաժնետոմսերի Գնման Օպցիոնի իրականացման կապակցությամբ Գնման Օպցիոնի Բաժնետոմսերի և C Դասի Արտոնյալ Բաժնետոմսերի ցանկացած մասի փոխանցման հետ կապված պահանջվող ծախսերը և վճարները (այդ թվում ռեեստրավարին կատավող վճարները):

11. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՄԱՍԵՐԸ

11.1 Սույն Պայմանագիրը կարող է ստորագրվել մի քանի օրինակից, որոնք բոլոր միասին և կողմերին տրամադրելու ժամանակ կհանդիսանան մեկ և միևնույն գործիքը: Ցանկացած Կողմ կարող է ընդունել սույն Պայմանագիրը՝ ստորագրելով որևէ այդպիսի օրինակ և Կառավարչին ներկայացնելով սույն պայմանագրի Հավելված Դ-ով նախատեսված ձևին համապատասխան կազմված և ստորագրված ընդունման ակտը:

12. ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

12.1 Սույն Պայմանագրից բխող ցանկացած ծանուցում պետք է լինի գրավոր և համարվի հանձնված՝ առձեռն, օդային փոստով կամ ֆաքսիմիլային եղանակով հասցեատիրոջը սույն Պայմանագրի ստորագրությունների ներքո նշված կողմի հասցեով կամ վերջինիս կողմից մյուս կողմից հաղորդած այլ հասցեով առաքելով:

13. ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

13.1 Սույն Պայմանագրով նախատեսված ոչ մի

of this Agreement is intended to be exclusive of any other remedy which is otherwise available at law, in equity, by statute or otherwise, and each and every other remedy shall be cumulative and shall be in addition to every other remedy given hereunder or now or hereafter existing at law, in equity, by statute or otherwise. The election of any one or more of such remedies by any of the Parties shall not constitute a waiver by such Party of the right to pursue any other available remedies.

14. SEVERANCE

14.1 If any provision of this Agreement or part thereof is rendered void, illegal or unenforceable by any legislation to which it is subject, it shall be rendered void, illegal or unenforceable to that extent and it shall in no way affect or prejudice the enforceability of the remainder of such provision or the other provisions of this Agreement.

15. ENTIRE AGREEMENT

15.1 This Agreement and the Investment Agreement embodies all the terms and conditions agreed upon between the Parties as to the subject matter of this Agreement and the Investment Agreement and supersedes and cancels in all respects all other previous agreements and undertakings, if any, with respect to the subject matter hereof, whether such be written or oral. Any amendment to or variation of this Agreement shall be effective only if it is in writing and duly signed and confirmed in writing by the authorized representative of all Parties.

16. FURTHER ACTS

16.1 The Parties shall execute and do and take such steps as may be in their power to, procure that all other necessary persons, if any, execute and do all such further documents, agreements, deeds, acts and things as may be required so that full effect may be given to the provisions of this Agreement.

պաշտպանության միջոց չի բացառում օրենքով կամ այլ կերպ հասանելի այլ միջոցի կիրառումը և ցանկացած այլ միջոց համախառն և լրացուցիչ կլինի սույն Պայմանագրով, այժմ կամ հետագայում գործող օրենքով կամ այլ կերպ նախատեսված միջոցների հետ: Այդ միջոցներից մեկի կամ մի քանիսի ընտրությունը չի կարող մեկնաբանվել որպես այդ Կողմի կողմից ցանկացած այլ հասանելի միջոցների դիմելու իրավունքից հրաժարում:

14. ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆՈՒԹՅՈՒՆ

14.1 Սույն Պայմանագրի նկատմամբ կիրառվող օրենսդրությամբ սույն Պայմանագրի որևէ դրույթի կամ դրա մի մասի անվավերությունը, անօրինականությունը կամ դիզպոզիտիվ բնույթը վերաբերում է միայն այդ դրույթին կամ դրա մասին և որևէ կերպ չի ազդում այդ դրույթի մնացած մասի կամ այլ դրույթների կատարման ենթակա լինելու վրա:

15. ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

15.1 Սույն Պայմանագիրը և Ներդրումային Պայմանագիրը կազմում են սույն Պայմանագրի և Ներդրումային Պայմանագրի առարկայի վերաբերյալ Կողմերի համաձայնության պայմանները և բոլոր առումներով գերակայում ու չեղյալ են հայտարարում Կողմերի միջև առկա բոլոր նախկին բանավոր և գրավոր պայմանագրերն ու հանձնառությունները՝ կապված սույն Պայմանագրի առարկայի հետ: Սույն Պայմանագրի ցանկացած փոփոխություն կամ շեղում գործում է միայն գրավոր լինելու և բոլոր Կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից գրավոր կերպով պատշաճ ստորագրվելու և հաստատվելու դեպքում:

16. ՀԵՏԱԳԱ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

16.1 Կողմերը պետք է ձեռնարկեն իրենց իրավասությունների սահմաններում գտվող բոլոր միջոցները՝ ապահովելու համար բոլոր անհրաժեշտ անձանց կողմից, եթե այդպիսիք կան, հետագա փաստաթղթերի, համաձայնագրերի, ակտերի կնքումը և սույն Պայմանագրի դրույթների ամբողջական գործողությունն ապահովելու համար անհրաժեշտ այլ գործողությունների կատարումը:

17. GOVERNING LAW AND JURISDICTION

17.1 This Agreement shall be governed by and construed according to the laws of the Republic of Armenia.

17.2 Any dispute, controversy or claim arising out of or relating to this Agreement, or the breach, termination or invalidity hereof, shall be settled by arbitration in accordance with the UNCITRAL Arbitration Rules as at present in force. There shall be one arbitrator and the appointing authority shall be LCIA (London Court of International Arbitration). The seat and place of arbitration shall be London, England and the English language shall be used throughout the arbitral proceedings. The arbitral tribunal shall not be authorised to grant, and the Parties agree that none of them shall seek from any judicial authority, any interim measures or pre-award relief against each other, any provisions of UNCITRAL Arbitration Rules notwithstanding.

18. RIGHTS OF THIRD PARTIES

18.1 A person who is not a party to this Agreement shall have no right to enforce any of the provisions in this Agreement.

Manager

Signed by

for and on behalf of

GRANATUS VENTURES CJSC

in the presence of :-

Fund

Signed by

for and on behalf of

GRANATUS VENTURE FUND I

CJSC

in the presence of :-

)
)
)
)
)
)
)
)
)
)
)
)

17. ԿԻՐԱՌԵԼԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ

17.1 Սույն Պայմանագիրը կարգավորվում և մեկնաբանվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

17.2 Սույն Պայմանագրի հետ կապված ցանկացած վեճ, տարաձայնություն, կամ պահանջ, ինչպես նաև խախտում, վաղաժամկետ դադարեցում կամ անվավերություն, լուծվում է արբիտրաժային կարգով, ՅՈՒՆՍԻՏՐԱԼ (UNCITRAL) գործող Արբիտրաժային Կանոնների համապատասխան: Արբիտրաժային դատարանը բաղկացած է լինելու մեկ դատավորից, որը նշանակվելու է ԼՄԱԴ-ի (Լոնդոնի Միջազգային Արբիտրաժային Դատարան) կողմից: Արբիտրաժի գտնվելու և դատավարության իրականացման վայրը լինելու է Լոնդոնը, Անգլիա, և արբիտրաժային դատավարության ողջ ընթացքը իրականացվելու է անգլերենով: Արբիտրաժային դատարանը լիազորված չէ կիրառել, իսկ Կողմերը համաձայնում են դատական իշխանություններից միմյանց դեմ չհայցել որևէ միջանկյալ կամ նախնական դատական պաշտպանության միջոցներ՝ անկախ ՅՈՒՆՍԻՏՐԱԼ (UNCITRAL) Արբիտրաժային Կանոնների դրույթներից:

18. ԵՐՐՈՐԴ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

18.1 Սույն Պայմանագրի կողմ չհանդիսացող անձինք իրավունք չունեն պարտադրել սույն Պայմանագրի որևէ դրույթ:

Ֆոնդի Կառավարիչ

Ստորագրված է

ԳՐԱՆԱՏՈՒՍ ՎԵՆՉՈՒՐՍ ՓԲԸ-ի կողմից

[_____] -ի

ներկայությամբ

Ֆոնդ

Ստորագրված է

ԳՐԱՆԱՏՈՒՍ ՎԵՆՉՈՒՐ ՖՈՆԴ I ՓԲԸ-ի կողմից

[_____] -ի

ներկայությամբ

[Գնորդ]

Ստորագրված է

[Գնորդի անունը] կողմից

[Purchaser]

[_____] -ի
ներկայությամբ

Signed by)
for and on behalf of)
[name of the Purchaser])
)
in the presence of :-)

SCHEDULE A(1)

FORM OF CALL OPTION NOTICE

TO: [Vendor’s name and address]
[Date]

Dear Sirs

RE: CALL OPTION NOTICE

We refer to the Call Option Agreement dated [insert date] [made between (1) yourselves, as Vendor and [insert names of Purchaser] as Purchasers (the “Option Agreement”). The Terms defined in the Option Agreement shall have the same meanings herein.

We hereby give you notice that we require you to sell to us in accordance with the terms and conditions of the Option Agreement ALL the Call Option Shares in the following proportions on [insert date] which shall for the purpose of the Option Agreement be the Completion Date.

Name of Exercising Purchaser	Number of Call Option Shares (Class A Preferred Shares and Class B Preferred Convertible Shares)	Call Option Price
		AMD
		AMD

We hereby confirm that the following Purchasers do not wish to exercise the Call Option and hereby unconditionally and irrevocably renounces all their rights under the Option Agreement with effect from the date hereof:

ՀԱՎԵԼՎԱԾ Ա(1)

ԳՆՄԱՆ ՕՊՑԻՈՆԻ ԾԱՆՈՒՑՄԱՆ ՁԵՎ

[ԳՆՈՐԴԻ ԱՆՈՒՆԸ]
[Ամսաթիվ]

Հարգելի պարոնայք,

ԳՆՄԱՆ ՕՊՑԻՈՆԻ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Մենք հղում ենք կատարում Ձեր՝ որպես Վաճառողի և [Գնորդի անուն]՝ որպես Գնորդների միջև [ամսաթիվ] կնքված Գնման Օպցիոնի Պայմանագրին («Օպցիոն Պայմանագիր»): Օպցիոն Պայմանագրում սահմանված Եզրույթներն այստեղ ունեն նույն իմաստը:

Մենք սույնով ծանուցում ենք, որ պահանջում ենք վաճառել Գնման Օպցիոնի ԲՈՂՈՐ Բաժնետոմսերը Օպցիոն Պայմանագրի պայմաններին համապատասխան՝ հետևյալ համամասնությամբ և [ամսաթիվ] օրը, որը Օպցիոն Պայմանագրի իմաստով կհամարվի Ավարտի Օր:

Գործող Գնորդի անուն ազգանուն/ անվանում	Գնման Օպցիոնի Բաժնետոմսերի Քանակը (A Դասի Արտոնյալ Բաժնետոմսեր և B Դասի Արտոնյալ Փոխարկելի Բաժնետոմսեր)	Գնման Օպցիոնի Գինը

Մենք սույնով հաստատում ենք, որ հետևյալ Գնորդները չեն ցանկանում իրականացնել Գնման Օպցիոնը և սույնով անվերապահերեն և անհետկանչելիորեն հրաժարվում են Օպցիոն Պայմանագրից բխող իրենց իրավունքներից՝ սկսած սույն փաստաթղթի ամսաթվից:

Names of Purchasers not exercising the Call Option:

Գնման Օպցիոնը չիրականացնող Գնորդների անունները.

Yours faithfully

SIGNED BY _____
for and behalf of
[insert name of Purchaser]

SIGNED BY _____
for and behalf of
[insert name of Purchaser]

SCHEDULE A(2)

FORM OF CLASS C PREFERRED SHARES CALL OPTION NOTICE

TO: [Vendor's name and address]
[Date]

Dear Sirs

RE: CLASS C PREFERRED SHARES CALL OPTION NOTICE

We refer to the Call Option Agreement dated [insert date] [made between (1) yourselves, as Vendor and [insert name of the Manager] (the "Option Agreement"). The Terms defined in the Option Agreement shall have the same meanings herein.

We hereby give you notice that we require you to sell to us in accordance with the terms and conditions of the Option Agreement ALL the Class C Preferred Shares on [insert date] which shall for the purpose of the Option Agreement be the Completion Date.

Yours faithfully

Հարգանքով,

Ստորագրված է
[Գնորդի անուն]-ի կողմից

Ստորագրված է
[Գնորդի անուն]-ի կողմից

ՀԱՎԵԼՎԱԾ Ա(2)

ԳՆՄԱՆ ՕՊՑԻՈՆԻ ԾԱՆՈՒՑՄԱՆ ՁԵՎ

[ԳՆՈՐԴԻ ԱՆՈՒՆԸ]
[Ամսաթիվ]

Հարգելի պարոնայք,

ԵՄՄԱՆ ԱՐՏՈՆՅԱԼ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ԳՆՄԱՆ ՕՊՑԻՈՆԻ ԾԱՆՈՒՑՈՒՄ

Մենք հղում ենք կատարում Ձեր՝ որպես Վաճառողի և [Կառավարչի անուն]՝ որպես Կառավարչի միջև [ամսաթիվ] կնքված Գնման Օպցիոնի Պայմանագրին («Օպցիոն Պայմանագիր»): Օպցիոն Պայմանագրում սահմանված Եզրույթներն այստեղ ունեն նույն իմաստը:

Մենք սույնով ծանուցում ենք, որ պահանջում ենք վաճառել ԵՄՄԱՆ ԲՈԼՈՐ Արտոնյալ Բաժնետոմսերը Օպցիոնի Պայմանագրի պայմաններին համապատասխան՝ հետևյալ համամասնությամբ և [ամսաթիվ] օրը, որը Օպցիոն Պայմանագրի իմաստով կհամարվի Ավարտի Օր:

SIGNED BY _____
for and behalf of
[insert name of Manager]

Հարգանքով,

Ստորագրված է
[Կառավարչի]-ի կողմից

SCHEDULE B

FORM OF VENDOR TRANSFER DEED OF NOVATION
THIS DEED OF NOVATION is made on this _____ between:

- (1) Government of the Republic of Armenia, represented by [_____] (**“ the Vendor”**);
 - (2) [_____] (Registration No. _____), a company incorporated in _____ with its registered office at [_____] (**“the Transferee”**)
 - (3) [_____] (Registration No. _____), a company incorporated in _____ with its registered Office at [_____] ;
 - (4) [insert name];
- (Parties (3) and (4) are collectively known as “the Purchasers and individually as a **“Purchaser”**)

All of them are hereinafter referred to collectively as the **“Parties”** and individually as a **“Party”**.

Whereas:

(A) Pursuant to an Investment Agreement dated [_____] (“Investment Agreement”), the Vendor and the Purchasers had agreed to make equity investments into [Granatus Venture Fund I CJSC, registration number and registered address of the Fund] (“the Fund”);

(B) Pursuant to a Call Option Agreement dated [_____] (“Call Option Agreement”) by and among, inter alia, the Vendor and the Purchasers, the Vendor granted the Purchasers the Call Option to purchase from the Vendor free of Encumbrance but subject to the terms of the Investment Agreement all rights, benefits and entitlements attaching thereto of the Call Option Shares (as defined in the Call Option Agreement) on the terms and conditions of the Call Option Agreement.

(C) The Vendor intends to transfer all of its Shares in the Fund to the Transferee with effect from the Effective Date. The Parties desire that with effect on and from the Effective Date (as defined below), (a) all

ՀԱՎԵԼՎԱԾ Բ

ՎԱՃԱՌՈՂԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՆՈՐԱՅՄԱՆ ԱԿՏԻ ՁԵՎ

Սույն Նորացման Ակտը կազմվել է _____-ին, հետևյալ անձանց կողմից

- (1) Հայաստանի Հանրապետության կառավարություն՝ ներկայացված [_____] -ի կողմից (**«Վաճառող»**),
 - (2) [_____] (Գրանցման N _____), ընկերություն՝ հիմնադրված _____ -ում, գրանցման հասցե՝ [_____] (**«Ստացող»**),
 - (3) [_____] (Գրանցման N _____), ընկերություն՝ հիմնադրված _____ -ում, գրանցման հասցե՝ [_____] ,
 - (4) [անուն];
- ((3) և (4) Կողմերը միասին կհիշատակվեն որպես **«Գնորդներ»**, իսկ առանձին՝ **«Գնորդ»**)
- Բոլորը միասին այսուհետ կհիշատակվեն որպես **«Կողմեր»**, իսկ առանձին՝ **«Կողմ»**

Քանզի

(Ա) [____թ.] կնքված Ներդրումային Պայմանագրին համապատասխան (**«Ներդրումային Պայմանագիրը»**)՝ Վաճառողն ու Գնորդները համաձայնել են Գրանատուս Վենչուր Ֆոնդ I ՓԲԸ-ում (գրանցման N _____, գրանցման հասցե _____) (**«Ֆոնդ»**) կատարել կապիտալ ներդրումներ:

(Բ) [____թ.], ի թիվս այլոց, Վաճառողի և Գնորդների միջև կնքված Գնման Օպցիոնի Պայմանագրին համապատասխան (**«Գնման Օպցիոնի Պայմանագիրը»**)՝ Վաճառողը Գնորդներին է շնորհել Գնման Օպցիոնի Պայմանագրով սահմանված պայմաններով և կարգով Գնման Օպցիոնի Բաժնետոմսերի հետ կապված իրավունքների, շահերի և հավակնությունների՝ Ներդրումային Պայմանագրով սահմանված կարգով և առանց Ծանրաբեռնվածությունների՝ Վաճառողից ձեռք բերելու իրավունք:

(Գ) Վաճառողը մտադրված է Կատարելու օրվա դրությամբ փոխանցել Ֆոնդի իր բոլոր Բաժնետոմսերը Ստացողին: Կողմերը ցանկանում են Կատարելու օրվանից (սահմանված ստորև)

rights, interests and obligations of the Vendor arising from, under or in connection with the Call Option Agreement shall be assigned and transferred to the Transferee and (b) the Vendor shall be released and discharged from all its rights, interests and obligations arising from, under or in connection with the Call Option Agreement.

Now it is hereby agreed as follows:

1. Definitions

In this Deed of Novation:

- (a) "Effective Date" means [insert date]; and
- (b) "Shares" means any shares in the capital of the Fund (Class A Preferred Shares and Class B Preferred Convertible Shares);

2. Transfer and Novation of Call Option

Subject to the completion of the transfer by the Vendor of all its Shares in the Fund to the Transferee in accordance with the terms of the Investment Agreement, on and from the Effective Date:

(a) the Vendor agrees that all rights and interests of the Vendor arising from, under or in connection with the Call Option Agreement shall be assigned and transferred to the Transferee, and the Vendor hereby assigns and transfers, and the Transferee hereby accepts the assignment and transfer of, all such rights and interests to the Transferee;

(b) the Transferee agrees to assume and undertake and hereby assumes and undertakes to perform all the obligations of the Vendor arising from, under or in connection with the Call Option Agreement in every way as if the Transferee was party to the Call Option Agreement in lieu of the Vendor; and

3. The Purchasers' Consent and Undertakings

With effect from the Effective Date and subject to the completion of the transfer by the Vendor to the Transferee of all its Shares in the Fund, the Purchasers:

(a) consent to the transfer and assignment of all the rights, interests and obligations of the Vendor

սկսած (ա) Գնման Օպցիոնի Պայմանագրից բխող և դրա հետ կապված Վաճառողի իրավունքները, շահերն ու պարտականությունները փոխանցվեն կամ զիջվեն Ստացողին, (բ) Վաճառողը ազատվի Գնման Օպցիոնի Պայմանագրից բխող և դրա հետ կապված Վաճառողի բոլոր իրավունքներից, շահերից ու պարտականություններից:

Կողմերը սույնով համաձայնվում են հետևյալի մասին.

1. Հասկացություններ

Սույն Նորացման Ակտում՝

- (ա) «Կատարելու Օր» նշանակում է [ամսաթիվ],
- (բ) «Բաժնետոմսեր» նշանակում է Ֆոնդի կապիտալում ցանկացած բաժնետոմս (Դաս Ա Արտոնյալ Բաժնետոմսեր, Դաս Բ Արտոնյալ Փոխարկելի Բաժնետոմսեր):

2. Գնման Օպցիոնի Փոխանցում և Նորացում

Վաճառողի կողմից Ֆոնդում իր բոլոր Բաժնետոմսերի՝ Կատարելու Օրը Ներդրումային Պայմանագրով սահմանված կարգին ու պայմաններին համապատասխան փոխանցման ավարտով.

(ա) Վաճառողը համաձայնում է, որ Գնման Օպցիոնի Պայմանագրից բխող և դրա հետ կապված Վաճառողի իրավունքներն ու շահերը պետք է փոխանցվեն կամ զիջվեն Ստացողին, և Վաճառողը սույնով փոխանցում և զիջում է, իսկ Ստացողը ընդունում է բոլոր այն իրավունքորի և շահերի փոխանցումը իրեն,

(բ) Ստացողը համաձայնում է ընդունել և ստանձնել և սույնով ընդունում և ստանձնում է Գնման Օպցիոնի Պայմանագրից բխող և դրա հետ կապված Վաճառողի պարտականությունները բոլոր առումներով և այնպես, ինչպես կլինեն, եթե Վաճառողի փոխարեն Ստացողը Գնման Օպցիոնի Պայմանագրի կողմ լիներ:

3. Գնորդների համաձայնությունն ու հանձնառությունը

Կատարելու Օրը Վաճառողի կողմից Ֆոնդում իր բոլոր Բաժնետոմսերի փոխանցման ավարտով Գնորդները.

(ա) համաձայնում են վերոշարադրյալ Դրույթ 2-ին համապատասխան Վաճառողի կողմից Ստացողին Գնման Օպցիոնի փոխանցմանը,

arising from, under or in connection with the Call Option Agreement to the Transferee pursuant to Clause 2 above;

(b) agree and acknowledge that the Vendor is hereby released and discharged from all its obligations arising from, under or in connection with the Call Option Agreement; and

(c) recognise the Transferee as the Vendor's successor in title in interest in and to the Call Option Agreement, the Transferee hereby becomes entitled to all right title and interest of the Vendor in and to the Call Option Agreement as if the Transferee were the original party to the Call Option Agreement in place of the Vendor and the Transferee will hereby assume and undertake to perform all the obligations of the Vendor arising from, under or in connection with the Call Option Agreement in every way as if the Transferee was a party to the Call Option Agreement in lieu of the Vendor.

4. Rights of Third Parties

A person who is not a party to this Deed of Novation has no right to enforce any term of this Deed of Novation and notwithstanding any term of this Deed of Novation, the consent of any third party is not required for any variation (including any release or compromise of any liability) or termination of this Deed of Novation.

5. Governing Law and Dispute Resolution

This Deed of Novation shall be governed by and be construed in accordance with the laws of Armenia.

Any dispute, controversy or claim arising out of or relating to this Agreement, or the breach, termination or invalidity hereof, shall be settled by arbitration in accordance with the UNCITRAL Arbitration Rules as at present in force. There shall be one arbitrator and the appointing authority shall be LCIA (London Court of International Arbitration). The seat and place of arbitration shall be London, England and the English language shall be used throughout the arbitral proceedings.

(բ) համաձայնում և հաստատում են, որ Վաճառողը սույնով ազատվում է Գնման Օպցիոնի Պայմանագրից բխող և դրա հետ կապված Վաճառողի բոլոր իրավունքներից, շահերից ու պարտականություններից,

(գ) ճանաչում են Ստացողին՝ որպես Վաճառողի՝ Գնման Օպցիոնից բխող կարգավիճակի իրավահաջորդ, իսկ Ստացողը սույնով դառնում է Գնման Օպցիոնի Պայմանագրից բխող Վաճառողի իրավունքների և շահերի իրավատեր՝ այնպես, ինչպես կլիներ եթե Ստացողը ի սկզբանե Վաճառողի փոխարեն Գնման Օպցիոնի Պայմանագրի կողմ լիներ, իսկ Ստացողը սույնով պարտավորվում է կատարել Գնման Օպցիոնի Պայմանագրից բխող և դրա հետ կապված Վաճառողի պարտականությունները բոլոր առումներով և այնպես, ինչպես կլիներ, եթե Վաճառողի փոխարեն Ստացողը Գնման Օպցիոնի Պայմանագրի կողմ լիներ:

4. Երրորդ Անձանց Իրավունքներ

Սույն Նորացման Ակտի կողմ չհանդիսացող անձը իրավունք չունի պահանջել դրա որևէ դրույթի կատարում և անկախ Նորացման Ակտով սահմանված պայմաններից՝ որևէ երրորդ անձի համաձայնություն չի պահանջվում սույն Նորացման Ակտի փոփոխման (այդ թվում՝ որևէ պատասխանատվությունից ազատում կամ դրա զիջում) կամ դադարման համար:

5. Կիրառվող Իրավունք Եվ Վեճերի Կարգավորում

Սույն Պայմանագիրը կարգավորվում և մեկնաբանվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

Սույն Պայմանագրի հետ կապված ցանկացած վեճ, տարաձայնություն, կամ պահանջ, ինչպես նաև խախտում, վաղաժամկետ դադարեցում կամ անվավերություն, լուծվում է արբիտրաժային կարգով, ՅՈՒՆԵՍԿՐԱԼ (UNCITRAL) գործող Արբիտրաժային Կանոններին համապատասխան: Դատավարությունը պետք է տեղի ունենա Լոնդոնում, Անգլիա, իսկ արբիտրաժային գործընթացների լեզուն կլինի անգլերենը: Արբիտրաժային դատարանը լիազորված չէ կիրառել, իսկ Կողմերը համաձայնում են դատական իշխանություններից միմյանց դեմ չհայցել որևէ միջանկյալ կամ նախնական դատական պաշտպանության միջոցներ՝ անկախ

ՅՈՒՆՍԻՏՐԱԼ (UNCITRAL) Արբիտրաժային
Կանոնների դրույթներից:

6. Counterparts

The Parties agree that this Deed of Novation may be executed in counterparts, all of which taken together shall constitute one and the same instrument.

In witness whereof this Deed of Novation has been executed by the Parties as a deed on the date stated at the beginning.

The Vendor

The Seal of)
Government of the Republic of Armenia.)
was hereunto affixed in)
the presence of:)

[Represented by:]

The Transferee)
The Seal of)
[Insert name of Transferee])
was hereunto affixed in)
the presence of:)

Director

The Purchasers

The Seal of)
[insert name of Purchaser])
was hereunto affixed in)
the presence of:)

Director

6. Պայմանագրի Օրինակներ

Կողմերը համաձայնում են, որ սույն Նորացման Ակտը կարող է կնքվել մի քանի օրինակից, որոնք միասին կկազմեն մեկ և միևնույն փաստաթուղթը: Ի ՀԱՎԱՍՏՈՒՄՆ

Սույն Նորացման Ակտը ստորագրվում է Կողմերի միջև նրանցից յուրաքանչյուրի կողմից վերոնշյալ ամսաթվին:

Վաճառող

Հայաստանի) Հանրապետության
կառավարության)
կնիքը դրվել է) _____)
Ներկայությամբ)

[Ներկայացված]

Ստացող)
[Ստացողի անուն])
կնիքը դրվել է) _____)
ներկայությամբ) _____)

Տնօրեն

Գնորդներ)
[Գնորդի անվանում])
կնիքը դրվել է)
_____)
ներկայությամբ)

Տնօրեն

SCHEDULE C

FORM OF PURCHASER TRANSFER DEED OF NOVATION

THIS DEED OF NOVATION is made on this _____ between:

(1) [_____] (Registration No. _____), a company incorporated in _____ with its registered Office at [_____] (**“ the Transferor ”**);

(2) [_____] (Registration No. _____), a company incorporated in _____ with its registered office at [_____] (**“ the Transferee ”**)

(3) Government of the Republic of Armenia, represented by [_____] (**“the Vendor”**)

(4) [_____] (Registration No. _____), a company incorporated in _____ with its registered Office at [_____];

(5) [insert name]

(Parties (4) and (5) are collectively known as **“the Purchasers”** and individually as a **“Purchaser”**)

All of them are hereinafter referred to collectively as the **“Parties”** and individually as a **“Party”**.

Whereas:

(A) Pursuant to an Investment Agreement dated [_____] (**“Investment Agreement”**), the Vendor and the Purchasers had agreed to make equity investments into [Granatus Venture Fund I CJSC, registration number and registered address of the Fund] (**“the Fund”**);

(B) Pursuant to a Call Option Agreement dated [_____] (**“Call Option Agreement”**) by and among, inter alia, the Vendor and the Purchasers, the Vendor granted the Purchasers

ՀԱՎԵԼՎԱԾ Գ

ԳՆՈՐԴԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՆՈՐԱՑՄԱՆ ԱԿՏԻ ՁԵՎ Սույն Նորացման Ակտը կազմվել է _____-ին, հետևյալ անձանց կողմից

(1) [_____] (Գրանցման N _____), ընկերություն՝ հիմնադրված _____ -ում, գրանցման հասցե՝ [_____] (**«Փոխանցող»**)

(2) [_____] (Գրանցման N _____), ընկերություն՝ հիմնադրված _____ -ում, գրանցման հասցե՝ [_____] (**«Ստացող»**)

(3) Հայաստանի Հանրապետության կառավարություն՝ ներկայացված [_____]-ի կողմից (**«Վաճառող»**);

(4) [_____] (Գրանցման N _____), ընկերություն՝ հիմնադրված _____ -ում, գրանցման հասցե՝ [_____]

(5) [անուն];

((4) և (5) Կողմերը միասին կհիշատակվեն որպես **«Գնորդներ»**, իսկ առանձին՝ **«Գնորդ»**) Բոլորը միասին այսուհետ կհիշատակվեն որպես **«Կողմեր»**, իսկ առանձին՝ **«Կողմ»** **Քանզի**

(Ա) [_____թ.] կնքված Ներդրումային Պայմանագրին համապատասխան (**«Ներդրումային Պայմանագիրը»**)՝ Վաճառողն ու Գնորդները համաձայնել են [Գրանատուս Վենչուր Ֆոնդ I ՓԲԸ-ում (գրանցման N _____, գրանցման հասցե _____) (**«Ֆոնդ»**)] կատարել կապիտալ ներդրումներ:

(Բ) [_____թ.], ի թիվս այլոց, Վաճառողի և Գնորդների միջև կնքված Գնման Օպցիոնի Պայմանագրին համապատասխան (**«Գնման Օպցիոնի Պայմանագիրը»**)՝ Վաճառողը Գնորդներին է շնորհել Գնման Օպցիոնի Պայմանագրով սահմանված պայմաններով և կարգով Գնման Օպցիոնի Բաժնետոմսերի հետ կապված

the Call Option to purchase from the Vendor free of Encumbrance but subject to the terms of the Investment Agreement all rights, benefits and entitlements attaching thereto of the Call Option Shares (as defined in the Call Option Agreement) on the terms and conditions of the Call Option Agreement.

(C) The Transferor intends to transfer all of its Shares in the Fund to the Transferee with effect from the Effective Date. The Parties desire that with effect on and from the Effective Date (as defined below), (a) all rights, interests and obligations of the Transferor arising from, under or in connection with the Call Option Agreement shall be assigned and transferred to the Transferee and (b) the Transferor shall be released and discharged from all its rights, interests and obligations arising from, under or in connection with the Call Option Agreement.

Now it is hereby agreed as follows:

1. Definitions

In this Deed of Novation:

- (a) "Effective Date" means [insert date]; and
- (b) "Shares" means any shares in the capital of the Fund (Class A Preferred Shares and Class B Preferred Convertible Shares);

2. Transfer and Novation of Call Option

Subject to the completion of the transfer by the Transferor of all its Shares in the Fund to the Transferee in accordance with the terms of the Investment Agreement, on and from the Effective Date:

- (a) the Transferor agrees that all rights and interests of the Transferor arising from, under or in connection with the Call Option Agreement shall be assigned and transferred to the Transferee, and the Transferor hereby assigns and transfers, and the Transferee hereby accepts the assignment and transfer of, all such rights and interests to the Transferee;

իրավունքների, շահերի և հավակնությունների՝ Ներդրումային Պայմանագրով սահմանված կարգով և առանց Ծանրաբեռնվածությունների՝ Վաճառողից ձեռք բերելու իրավունք:

(Գ) Փոխանցողը մտադրված է Կատարելու Օրվա դրությամբ փոխանցել Ֆոնդի իր բոլոր Բաժնետոմսերը Ստացողին: Կողմերը ցանկանում են Կատարելու Օրվանից (սահմանված ստորև) սկսած (ա) Գնման Օպցիոնի Պայմանագրից բխող և դրա հետ կապված Փոխանցողի իրավունքները, շահերն ու պարտականությունները փոխանցվեն կամ զիջվեն Ստացողին, (բ) Փոխանցողը ազատվի Գնման Օպցիոնի Պայմանագրից բխող և դրա հետ կապված Վաճառողի բոլոր իրավունքներից, շահերից ու պարտականություններից:

Կողմերը սույնով համաձայնում են հետևյալի մասին.

1. Հասկացություններ

Սույն Նորացման Ակտում՝

- (ա) «Կատարելու Օր» նշանակում է [ամսաթիվ],
- (բ) «Բաժնետոմսեր» նշանակում է Ֆոնդի կապիտալում ցանկացած բաժնետոմս (Դաս Ա Արտոնյալ Բաժնետոմսեր, Դաս Բ Արտոնյալ Փոխարկելի Բաժնետոմսեր):

2. Գնման Օպցիոնի Փոխանցում և Նորացում

Կատարելու Օրը Փոխանցողի կողմից Ֆոնդում իր բոլոր Բաժնետոմսերի Ներդրումային Պայմանագրով սահմանված կարգին ու պայմաններին համապատասխան փոխանցման ավարտով.

- (ա) Փոխանցողը համաձայնում է, որ Գնման Օպցիոնի Պայմանագրից բխող և դրա հետ կապված Փոխանցողի իրավունքներն ու շահերը պետք է փոխանցվեն կամ զիջվեն Ստացողին, և Փոխանցողը սույնով փոխանցում և զիջում է, իսկ Ստացողը ընդունում է բոլոր այն իրավունքների և շահերի փոխանցումը իրեն,

(բ) Ստացողը համաձայնում է ընդունել և ստանձնել և սույնով ընդունում և ստանձնում է Գնման Օպցիոնի Պայմանագրից բխող և դրա հետ կապված Փոխանցողի պարտականությունները բոլոր առումներով և այնպես, ինչպես կլիներ, եթե Փոխանցողի փոխարեն Ստացողը Գնման Օպցիոնի Պայմանագրի կողմ լիներ,

- (գ) Փոխանցողն ու Վաճառողը սույնով ազատում են միմյանց և հրաժարվում են Գնման Օպցիոնի Պայմանագրի հետ այժմ կամ հետագայում կապ ունեցող ցանկացած և բոլոր պահանջներից և

(b) the Transferee agrees to assume and undertake and hereby assumes and undertakes to perform all the obligations of the Transferor arising from, under or in connection with the Call Option Agreement in every way as if the Transferee was party to the Call Option Agreement in lieu of the Transferor; and

(c) the Transferor and the Vendor hereby release and discharge each other from, and does hereby waive, any and all claims, demands, and rights against each other which each now has or may hereafter have in connection with the Call Option Agreement but without prejudice to the rights of the Transferee and the Vendor against each other in respect of any liabilities, obligations, claims and demands with effect from the Effective Date.

3. Vendor's and Purchasers' Consent and Undertakings

With effect from the Effective Date and subject to the completion of the transfer by the Transferor to the Transferee of all its Shares in the Fund, the Vendor and the Purchasers:

(a) consent to the transfer of the Call Option by the Transferor to the Transferee pursuant to Clause 2 above;

(b) agree and acknowledge that the Transferor is hereby released and discharged from all its obligations arising from, under or in connection with the Call Option Agreement; and

(c) recognise the Transferee as the Transferor's successor in title in interest in and to the Call Option Agreement, the Transferee hereby becomes entitled to all right title and interest of the Transferor in and to the Call Option Agreement as if the Transferee were the original party to the Call Option Agreement in place of the Transferor and the Transferee will hereby assume and undertake to perform all the obligations of the Transferor arising from, under or in connection with the Call Option Agreement in every way as if the Transferee was a party to the Call Option Agreement in lieu of the Transferor.

իրավունքներից՝ չսահմանափակելով, սակայն, Ստացողի և Վաճառողի՝ միմյանց նկատմամբ ունեցած իրավունքները՝ կապված Կատարելու Օրվանից գոյություն ունեցող որևէ պատասխանատվության, պարտականության և պահանջների հետ:

3. Գնորդների համաձայնությունն ու հանձնառությունը

Կատարելու Օրը Փոխանցողի կողմից Ֆոնդում իր բոլոր Բաժնետոմսերի փոխանցման ավարտով Վաճառողն ու Գնորդները.

(ա) համաձայնում են Գնման Օպցիոնի Պայմանագրից բխող և դրա հետ կապված Փոխանցողի իրավունքների, շահերի ու պարտականությունների՝ վերոշարադրյալ Դրույթ 2-ին համապատասխան Ստացողին փոխանցմանը,

(բ) համաձայնում և հաստատում են, որ Փոխանցողը սույնով ազատվում է Գնման Օպցիոնի Պայմանագրից բխող և դրա հետ կապված Վաճառողի բոլոր իրավունքներից, շահերից ու պարտականություններից,

(գ) ճանաչում են Ստացողին՝ որպես Փոխանցողի՝ Գնման Օպցիոնից բխող կարգավիճակի իրավահաջորդ, իսկ Ստացողը սույնով դառնում է Գնման Օպցիոնի Պայմանագրից բխող Փոխանցողի իրավունքների և շահերի իրավատեր՝ այնպես, ինչպես կլիներ եթե Ստացողը ի սկզբանե Փոխանցողի փոխարեն Գնման Օպցիոնի Պայմանագրի կողմ լիներ, իսկ Ստացողը սույնով պարտավորվում է կատարել Գնման Օպցիոնի Պայմանագրից բխող և դրա հետ կապված Փոխանցողի պարտականությունները բոլոր առումներով և այնպես, ինչպես կլիներ, եթե Փոխանցողի փոխարեն Ստացողը Գնման Օպցիոնի Պայմանագրի կողմ լիներ:

4. Երրորդ Անձանց Իրավունքներ

Սույն Նորացման Ակտի կողմ չհանդիսացող անձը իրավունք չունի պահանջել դրա որևէ դրույթի կատարում և անկախ Նորացման Ակտով սահմանված պայմաններից՝ որևէ երրորդ անձի համաձայնություն չի պահանջվում սույն Նորացման Ակտի փոփոխման (այդ թվում՝ որևէ պատասխանատվությունից ազատում կամ դրա զիջում) կամ դադարման համար:

5. Կիրառելի Իրավունք Եվ Վեճերի Կարգավորում

Սույն Պայմանագիրը կարգավորվում և մեկնաբանվում է Հայաստանի Հանրապետության

4. Rights of Third Parties

A person who is not a party to this Deed of Novation has no to enforce any term of this Deed of Novation and notwithstanding any term of this Deed of Novation, the consent of any third party is not required for any variation (including any release or compromise of any liability) or termination of this Deed of Novation.

5. Governing Law and Dispute Resolution

This Deed of Novation shall be governed by and be construed in accordance with the laws of Armenia.

Any dispute, controversy or claim arising out of or relating to this Agreement, or the breach, termination or invalidity hereof, shall be settled by arbitration in accordance with the UNCITRAL Arbitration Rules as at present in force. There shall be one arbitrator and the appointing authority shall be LCIA (London Court of International Arbitration). The seat and place of arbitration shall be London, England and the English language shall be used throughout the arbitral proceedings. The arbitral tribunal shall not be authorised to grant, and the Parties agree that none of them shall seek from any judicial authority, any interim measures or pre-award relief against each other, any provisions of UNCITRAL Arbitration Rules notwithstanding.

6. Counterparts

The Parties agree that this Deed of Novation may be executed in counterparts, all of which taken together shall constitute one and the same instrument.

In witness whereof this Deed of Novation has been executed by the Parties as a deed on the date stated at the beginning.

The Transferor

The Seal of)

օրենսդրությամբ:

Սույն Պայմանագրի հետ կապված ցանկացած վեճ, տարաձայնություն, կամ պահանջ, ինչպես նաև խախտում, վաղաժամկետ դադարեցում կամ անվավերություն, լուծվում է արբիտրաժային կարգով, ՅՈՒՆՍԻՏՐԱԼ (UNCITRAL) գործող Արբիտրաժային Կանոններին համապատասխան: Դատավարությունը պետք է տեղի ունենա Լոնդոնում, Անգլիա, իսկ արբիտրաժային գործընթացների լեզուն կլինի անգլերենը: Արբիտրաժային դատարանը լիազորված չէ կիրառել, իսկ Կողմերը համաձայնում են դատական իշխանություններից միմյանց դեմ չհայցել որևէ միջանկյալ կամ նախնական դատական պաշտպանության միջոցներ՝ անկախ ՅՈՒՆՍԻՏՐԱԼ (UNCITRAL) Արբիտրաժային Կանոնների դրույթներից:

6. Պայմանագրի Օրինակներ

Կողմերը համաձայնում են, որ սույն Նորացման Ակտը կարող է կնքվել մի քանի օրինակներից, որոնք միասին կկազմեն մեկ և միևնույն փաստաթուղթը:

Ի ՀԱՎԱՍՏՈՒՄՆ

Սույն Նորացման Ակտը ստորագրվում է Կողմերի միջև նրանցից յուրաքանչյուրի կողմից վերոնշյալ ամսաթվին:

Փոխանցող

[Փոխանցողի անուն])

կնիքը դրվել է)

_____)

ներկայությամբ)

Տնօրեն

Ստացող

[Ստացողի անուն])

կնիքը դրվել է)

_____)

ներկայությամբ)

Տնօրեն

Վաճառող

Հայաստանի Հանրապետության կառավարության

)

[Insert name of Transferor])
was hereunto affixed in)
the presence of:)

Director
The Transferee

կնիքը դրվել է)
_____)

ներկայությամբ)
_____)

The Seal of)
[Insert name of Transferee])
was hereunto affixed in)
the presence of:)

Director
The Vendor

[Ներկայացված])
Գնորդներ)
[Գնորդի անվանում])
կնիքը դրվել է)

_____)
ներկայությամբ)

The Seal of)
Government of the)
Republic of Armenia)
was hereunto affixed in)
the presence of:)

[Represented by:]

Տնօրեն

The Purchasers

The Seal of)
[insert name of Purchaser])
was hereunto affixed in)
the presence of:)

Director

<p style="text-align: center;">SCHEDULE D</p> <p>[insert the date] _____</p> <p>[place of execution] _____</p> <p><u>THIS ACCEPTANCE NOTE is made on this</u> _____ by:</p> <p>(A) Granatus Venture Fund I CJSC, a company</p>	<p style="text-align: center;">ՀԱՎԵԼՎԱԾ Դ</p> <p>[լրացնել օրը, ամիսը, տարին] _____ [կնքման վայրը]</p> <p>ՍՈՒՅՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱԿՏԸ կազմված է հետևյալ անձանց կողմից.</p> <p>(Ա) «Գրանատուս Վենչուր Ֆոնդ Ի» փակ</p>
---	--

constituted under the laws of Armenia and registered with the Central Bank of Armenia as a venture capital fund (the "Fund"), Government of the Republic of Armenia, represented by [insert name] and Granatus Ventures CJSC, a joint stock company organized and registered under the laws of Armenia having its business address at [insert address], acting as the investment manager of the Fund (the "Manager") and [insert the name of investors including the executing investor] (the Manager and Investors shall collectively be referred as the "Purchasers") have agreed to enter into an investment agreement (the "Call Option Agreement").

- (B) Unless the context otherwise requires, words and expressions used in this note shall have the same meaning given to them in the Call Option Agreement.
- (C) The effective date of this Note is [insert date], 2013.
- (D) By signing this Note [insert the name of the investor] hereby approved and fully accepts the terms of the Call Option Agreement and agrees and undertakes from the effective date set forth under the (C) above to observe, perform and be bound by the terms of the Call Option Agreement and this Note and the rights and obligations of the [insert the name of the investor] and the Investors shall be construed accordingly.
- (E) This Acceptance Note shall take effect

բաժնետիրական ընկերություն, ընկերություն՝ ստեղծված Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան և գրանցված Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից՝ որպես վենչուրային ֆոնդ (այսուհետ՝ Ֆոնդ), Ներդրողները, Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝ ներկայացված [լրացնել անունը] կողմից, և «Գրանատուս Վենչուրս» փակ բաժնետիրական ընկերությունը, բաժնետիրական ընկերություն՝ ստեղծված և գործող Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, որի գործունեության վայրի հասցեն է [լրացնել հասցեն], որը հանդես է գալիս որպես Ֆոնդի ներդրումային կառավարիչ (այսուհետ՝ Կառավարիչ) և [լրացնել ներդրողների անունները, ներառյալ՝ ստորագրող ներդրողի անունը] (Կառավարիչը և Ներդրողները միասին կհիշատակվեն որպես Գնորդներ) համաձայնեցին կնքել սույն ներդրումային պայմանագիրը (այսուհետ՝ Գնման Օպցիոնի Պայմանագիր):

- (Բ) Բացառությամբ այն դեպքերի, երբ այլ բան է բխում ենթատեքստից, սույն ակտում կիրառվող բառերը և արտահայտություններն ունեն Գնման Օպցիոնի Պայմանագրում դրանց համար սահմանված նույն իմաստը:
- (Գ) Սույն Ակտն ուժի մեջ է մտնում [նշել օրը, ամիսը], 2013թ.-ին:
- (Դ) Ստորագրելով սույն Ակտը՝ [լրացնել ներդրողի անունը] սույնով հաստատում և լիովին ընդունում է Գնման Օպցիոնի Պայմանագրի դրույթները և համաձայնում և պարտավորվում է վերը նշված (Գ) կետում սահմանված ուժի մեջ մտնելու օրվանից պահպանել, իրականացնել և պարտավորված լինել Գնման Օպցիոնի Պայմանագրի և սույն Ակտի դրույթներով և [լրացնել Ներդրողի անունը] իրավունքներով և պարտականություններով և Ներդրողների համար պետք է մեկնաբանվի վերոնշյալին համապատասխան:

<p>regardless of whether it is executed by other Investors.</p> <p>(F) The Call Option Agreement and this Acceptance Note shall be read and construed as one instrument and any references to the Call Option Agreement and this Note shall be construed accordingly.</p> <p>(G) The provisions of Clauses 11, 12, 15, 16, 17 and 18 of the Call Option Agreement are hereby incorporated by reference into, and made a part of, this Note as if fully set forth herein in full, mutatis mutandis and (without prejudice to the generality thereof) as if reference therein to this "Agreement" were to this Note.</p> <p>The Investor <input type="checkbox"/>) in the presence of:) _____</p>	<p>(Ե) Սույն Ընդունման Ակտն ուժի մեջ է մտնում՝ անկախ այլ ներդրողների կողմից այն ստորագրելու հանգամանքից:</p> <p>(Զ) Գնման Օպցիոնի Պայմանագիրը և սույն Ընդունման Ակտը պետք է կարդալ և մեկնաբանել որպես մեկ միասնական փաստաթուղթ և ցանկացած հղում Գնման Օպցիոնի Պայմանագրին և սույն Ակտին պետք է մեկնաբանվի համապատասխանաբար:</p> <p>(Է) Գնման Օպցիոնի Պայմանագրի 11-րդ, 12-րդ, 15-րդ, 16-րդ, 17-րդ և 18-րդ կետերի դրույթները սույնով ներառված են սույն Ակտում արված հղմամբ, և կազմում են սույն Ակտի մասը՝ այնպես, ինչպես եթե լիովին սահմանված լինեին սույնով, համապատասխան փոփոխություններով և (առանց խաթարելու դրա ընդհանուր բնույթը) այնպես, որ դրանցում կատարված հղումը սույն «Պայմանագրին» դիտարկվեր որպես հղում սույն Ակտին:</p> <p>Ներդրող <input type="checkbox"/>) Ներկայությամբ՝) _____</p>
--	--

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Վ. ԳԱՐԻԵԼՅԱՆ